«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Սույն ուսումնասիրությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի ,«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Բիզնես և Կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական աջակցության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծության իրականացում» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բիզնես և Կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հայաստանի Հանրապետության Սոցիալական պաշտպանության ոլորտի 2025 թվականի բյուջեի վերլուծություն

Ընդհանուր ակնարկ

ՀՀ 2025թ. պետական բյուջեն հիմնվում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի» դրույթների վրա և ուղղված է այդ ծրագրով և ՀՀ կառավարության կողմից հաստատված ոլորտային ռազմավարություններով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2024թ. հուլիսի 4-ի N 1064-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով (ՄԺԾԾ) սահմանված ՀՀ կառավարության նպատակների, առաջնահերթությունների և թիրախների ապահովմանը:

«Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով (ընդունված ՀՀ ազգային ժողովի կողմից 4.12.2024թ.) 2025թ. բյուջեն եկամուտների գծով հաստատվել է 2,837.6 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 3,441.6 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով՝ 604 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի համապատասխանաբար 26.1, 31.5 և 5.5 տոկոսը:

2025թ.-ին ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտին հատկացված է շուրջ 905.6 մլրդ դրամ, ինչը կազմում է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 26.3%-ը: Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը պետական բյուջեում

ներկայացված են Սոցիալական պաշտպանության ծրագրերով և դրանց համապատասխան միջոցառումներով, որոնք համակարգվում են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) կողմից:

Սոցիալական պաշտպանության ոլորտը շարունակում է պահպանել գերակա դիրքը պետական քաղաքականությունում, որի հիմնական նպատակներեն են երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը: Սոցիալական պաշտպանության ոլորտին հատկացվող ֆինանսավորումն աճման միտում ունի: 2020-2025թթ. ֆինանսավորման ծավալների միջին տարեկան աճը կկազմի 9.7 տոկոս: Արդյունքում 2025թ.ի մակարդակը կգերազանցի 2020թ. մոտ 1.7 անգամ կամ 357.3 մլրդ դրամով: Ամենաբարձր աճը գրանցվել է 2024թ. 20.8%՝ 2023թ. նկատմամբ Աճի ցածր մակարդակ գրանցվել է 2022թ.-ին՝2021թ. նկատմամբ 1%: 2021-2025թթ. պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը կազմել է 10.6 տոկոս՝ սոցիալական պաշտպանության բյուջեի 9.7 տոկոս մակարդակի պայմաններում: Սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ. ցածր է նախորդող բոլոր հինգ տարիների համեմատությամբ: 2020-2025թթ. սոցիալական պաշտպանության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության միջին մակարդակը կազմել է 8.2 տոկոս:

Սոցիալական պաշտպանության ծախսերը 2025թ. նախատեսվում է ուղղել մի քանի հիմնական ուղղություններով, որոնցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ նշանակությունն ունի հանրային բարեկեցության ապահովման գործընթացում:

Ամենամեծ բաժինն ուղղվում է կենսաթոշակային ապահովությանը. այս նպատակով նախատեսված է 560.3 մլրդ դրամ, ինչը կազմում է ընդհանուր ծախսերի շուրջ 61.9 տոկոսը:

Երկրորդ խոշոր ուղղությունը սոցիալական ապահովությունն է, որի շրջանակում նախատեսված է 122.7 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 13.5 տոկոսը: Այս միջոցներն ուղղվում են նպաստների տրամադրմանը և սոցիալական աջակցության այլ ծրագրերի իրականացմանը՝ նպատակ ունենալով մեղմել խոցելի խմբերի սոցիալ-տնտեսական խնդիրները:

Մոտ 80.1 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 8.8 տոկոս նախատեսվում է ուղղել ժողովրդագրական վիճակի բարելավմանը, 142.6 մլրդ դրամ՝ այլ ծրագրերի, որոնցից են՝ ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով առանջին սոցիալական խմբերին տրվող

սոցիալական աջակցություն, սոցիալական աջակցություն անապահովության դեպքում, անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն, զբաղվածության և այլ ծրագրեր:

2025թ. Սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը ընդհանուր բյուջետային ծախսերում ցածր է նախորդ տարիների համեմատ: 2020-2024թթ. Սոցիալական բյուջե/ընդամենը բյուջետային ծախսեր հարաբերակցության միջին մակարդակը կազմել է 28.8 տոկոս:



Գծապատկեր 1. Սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեն և դրա տարեկան աճը 2020-2025թթ., տոկոս[1]

Գծապատկեր 1-ում արտացոլված է սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեի փոփոխությունները 2020-2025թթ. ընթացքում՝ ինչպես անվանական արտահայտությամբ (դրամ), այնպես էլ տարեկան աճի տեմպերով (%): Տվյալների համաձայն՝ 2021թ. ոլորտի բյուջեն կազմել է շուրջ 619.8 մլրդ դրամ, որը 2020թ. համեմատ ապահովել է մոտ 13%: աճ: 2022թ.-ին արձանագրվել է որոշակի նվազում՝ բյուջեն կազմել է 613.6 մլրդ դրամ, իսկ աճի տեմպը դարձել է բացասական՝ -1%, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես մակրոտնտեսական իրավիճակի փոփոխություններով, այնպես էլ սոցիալական ծախսերի կառուցվածքային վերանայումներով: Սկսած 2023թ. արձանագրվում է դրական դինամիկա. բյուջեն

[1] Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, հեղինակի հաշվարկներ

կազմել է՝ 705.6 մլրդ դրամ՝ ապահովելով 15% աճ նախորդ տարվա նկատմամբ: թ.-ին աճի տեմպերը առավելապես արագացել են՝ կազմելով 20.8%, իսկ ոլորտի բյուջեն գերազանցել է 852.5 մլրդ դրամը: Սա վկայում է սոցիալական պաշտպանության ծրագրերի նկատմամբ պետական ֆինանսավորման զգալի ավելացման մասին: 2025թ. բյուջեն շարունակում է աճել՝ հասնելով մոտ 905.9 մլրդ դրամի, սակայն տարեկան աճի տեմպերը դանդաղել են՝ կազմելով մոտ 6.3%: Աճի տեմպի նվազումը կարող է պայմանավորված լինել ֆինանսավորման կայունացմամբ և ծախսերի համեմատաբար հավասարակշռված քաղաքականությամբ՝ նախորդ տարիներին գրանցված բարձր աճի ֆոնին: Ընդհանուր առմամբ, 2020-2025թթ. ընթացքում սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեն ցուցաբերում է աճի կայուն միտում՝ որոշակի տատանումներով: Սա կարևոր ցուցանիշ է, որը փաստում է պետական քաղաքականության առաջնահերթությունը սոցիալական ոլորտում և բյուջետային միջոցների ավելացման միտումը՝ նպատակ ունենալով բարելավել սոցիալական ապահովության մակարդակը և աջակցել խոցելի խմբերին:



Գծապատկեր 2. 2025 թվականի Սոցիալական պաշտպանությանն ուղղվող ծախսերի ուղղությունները[2]

Գծապատկեր 2-ում ներկայացված է 2025 թվականի սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեի ներքին կառուցվածքը՝ ըստ հիմնական ծրագրային ուղղությունների: Ընդհանուր բյուջեն կազմում է շուրջ 905.6 մլրդ դրամ, որից

2 Աղբյուր՝ << պետական բյուջեի համառոտ ուղեցույց (քաղաքացու բյուջե).

https://minfin.am/hy/page/2018_2019

ամենամեծ մասնաբաժինը՝ 61.9% կամ 560.3 մլրդ դրամ, ուղղվում է կենսաթոշակային ապահովության համակարգին: Բյուջեի զգալի մասնաբաժին՝ 13.5% կամ 122.7 մլրդ դրամ, նախատեսված է սոցիալական ապահովության այլ ծրագրերի համար, որոնք ներառում են նպաստների և սոցիալական այլ աջակցության ձևեր՝ ուղղված խոցելի բնակչության խմբերին:142.6 մլրդ դրամ կամ 15.7% հատկացվում է այլ սոցիալական ծրագրերին, 80.1 մլրդ դրամ կամ 8.8%՝ ժողովրդագրական վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներին, որոնք ներառում են ծնելիության խրախուսման և ընտանիքների աջակցման քաղաքականության տարրեր:



Գծապատկեր 3. 2020-2025թթ. սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում, տոկոս[3]

Գծապատկեր 3-ի տվյալների համաձայն 2020-2025թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեում սոցիալական պաշտպանության ոլորտը պահպանել և ամրապնդել է իր առանցքային դիրքը: Ծախսերի կայուն և համեմատաբար արագ աճը ցույց է տալիս պետության հետևողական քաղաքականությունը՝ ուղղված խոցելի խմբերի կենսապահովման, սոցիալական ծառայությունների հասանելիության և կենսաթոշակային ապահովության համակարգերի ամրապնդմանը:

[3] Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, հեղինակի հաշվարկներ

Սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեի վերլուծությունն ըստ ծրագրերի

2025թ. բյուջեով նախատեսված է իրականացնել սոցիալական պաշտպանության բյուջետային 17 ծրագիր, որոնք ուղղված են սոցիալական տարբեր խմբերի աջակցությանը, կենսաթոշակների տրամադրմանը, բնակարային ապահովմանը և զբաղվածության ծրագրերին:

Սոցիալական պաշտպանություն 2025		Կշիռը ոլորտի ընդհանուր ծախսերում 2025		
		2025 (%)	2024 (%)	2025/2024 (%)
1005	Պարգևավճարներ և պատվովճարներ	1.23	1.27	2.91
1011	Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն	2.58	2.82	-2.46
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	1.29	1.06	28.95
1032	Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	0.54	0.45	25.79
1068	Ժողովրդագրական վիճակի բարելավում	8.84	7.82	20.14
1082	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	2.76	2.68	9.38
1088	Զբաղվածության ծրագիր	0.19	0.17	20.35
1098	Բնակարանային ապահովում	1.33	0.94	49.92
1102	Կենսաթոշակային ապահովություն	61.85	60.95	7.82
1117	Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	0.91	1.01	-4.68
1141	Երեխաների հիմնահարցեր	0.55	0.53	10.41
1145	Կանանց հիմնահարցեր, ընտանիքում բռնության և մարդկանց թրաֆիքինգի զոհերին աջակցություն	0.02	-	-
1153	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր	0.02	0.02	2.14
1160	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում	0.36	0.29	31.77
1184	Ավանդների և այլ փոխհատուցումներ	0.11	0.09	25.71
1205	Սոցիալական ապահովություն	13.54	12.71	13.19

1225	**Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն**	3.86	7.11	-42.27

Աղյուսակ 1. Սոցիալական պաշտպանության ծրագրերի կշիռը 2025թ. սոցիալական ծախսերում[4]

Բյուջետային ծրագրերի նպատակների իրացման համար հաստատված են բյուջետային ծրագրերի 86 միջոցառումներ, որոնց համար մշակված են ուղղակի արդյունքի ոչ ֆինանսական ցուցանիշներ: Բոլոր բյուջետային ծրագրերի համար մշակված են նպատակներ և վերջնական արդյունքի ցուցանիշներ: Ըստ կշռի՝ 2025թ. սոցիալական պաշտպանության բյուջեի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն հետևյալ ծրագրերը.

Առաջինը 1102 – Կենսաթոշակային ապահովություն ծրագիրն է, որի մասնաբաժինը՝ 61.85% կամ 80.8 մլրդ դրամ: 2024-ի համեմատ աճել է մոտ 25.8%: Կենսաթոշակային վճարումները շարունակում են մնալ համակարգի գերակշռող ծախսը՝ պայմանավորված կենսաթոշակների աճով և շահառուների թվի փոփոխությամբ: Հաջորդ ծրագիրը՝ 1011 – Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն ծրագիրն է, որի մասնաբաժինը կազմում է 2.58% կամ 23.4 մլրդ դրամ: 2024թ. համեմատ նկատվում է 2.46% նվազում, ինչը վկայում է, նպաստների կամ աջակցության ծավալի որոշակիորեն կրճատման մասին: Սա կարող է պայմանավորված լինել քաղաքականության վերանախագծմամբ, շահառուների թվի փոփոխությամբ կամ հասցեականության բարձրացմամբ:
1098 – Բնակարանային ապահովություն ծրագրի մասնաբաժինը 1.33% է (12 մլրդ դրամ), ինչը 2024թ. համեմատ աճել է գրեթե 49.9%: Սա զգալի աճ է, որը կարող է պայմանավորված լինել բնակարանային քաղաքականության ուժեղացմամբ, օրինակ՝ երիտասարդ ընտանիքների կամ զինծառայողների բնակարանային ապահովման ծրագրեր:
Հաջորդ ծրագիրը 1082 – Զբաղվածության խթանման ծրագրերն են, որի մասնաբաժինը կազմում է 2.75% (24.97 մլրդ դրամ): Աճը 2024թ. նկատմամբ կազմել է մոտ 9.38%, ինչը ցույց է տալիս ակտիվ զբաղվածությանն ուղղված քաղաքականության ընդլայնում:

[4]Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, հեղինակի հաշվարկներ



Գծապատկեր 4. Սոցիալական պաշտպանության բյուջեի կառուցվածքն ըստ ծրագրերի 2025թ., (%)[5]

Գծապատկեր 4-ում ներկայացված է սոցիալական պաշտպանության բյուջեի կառուցվածքն ըստ ծրագրերի: Տվյալ հետազոտության շրջանակներում թիրախային ուղղություն է ընտրվել սոցիալական աջակցության ոլորտը, որը 2025թ. սոցիալական պաշտպանության բյուջեում ներկայացված է **«1011 – Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն»** ծրագրով,որի

- **Նպատակն է՝** Օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը,
- **Վերջնական արդյունքի նկարագիրն է՝** Աղքատության մեղմում և ծայրահեղ աղքատության կրճատում:
- **Վերջնական արդյունքի չափորոշիչն է՝** Ծածկույթ բնակչությունից, %, որի ելակետային ցուցանիշը սահմանված է 12%, թիրախային ցուցանիշը՝ ոչ ավելի 16%:

ՀՀ կառավարության 09.01.2025 N 27-Ն որոշմամբ մարտի 17-ից ներդրվել է անապահովության գնահատման նոր համակարգ, որը նախ փորձնական ներդրվել է ՀՀ Կոտայքի և Սյունիքի մարզերում, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից՝ ամբողջ հանրապետությունում: Գնահատման նոր համակարգով սոցիալական աջակցության ծրագրերը կլինեն ավելի հասցեական, առաջարկվող ոչ ֆինանսական ծառայությունների փաթեթներն ուղղված կլինեն մարդկանց առաջնային կարիքների

[5] Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, հեղինակի հաշվարկներ

բավարարմանը կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտներում: Կներդրվի սոցիալական խնդիրների լուծման հստակ ձևաչափ՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծումը:

1011 ծրագիրն իր մեջ ներառում է 14 միջոցառումներ, որոնցից 13-ը ընթացիկ միջոցառումներ են, այդ թվում՝ 7 ծառայությունների մատուցման և 6 տրանսֆերտների տրամադրման, իսկ 1-ը՝ կապիտալ բնույթի միջոցառումներ: Բոլոր միջոցառումների համար մշակված են 57 ոչ ֆինանսական ուղղակի արդյունքի ցուցանիշներ, այդ թվում՝ 52 քանակական, 3 որակական և 2 ժամկետային ցուցանիշներ: Ցուցանիշների գերակշռող մեծամասնությունը՝ 91%-ը քանակական են, որոնք կարևոր են միջոցառման իրականացմանը հետևելու առումով, սակայն դրանք հնարավորություն չեն տալիս գնահատել միջոցառման իրականացման որակը և արդյունավետությունը:

Ծրագրի միջոցառումների անվանումները հիմնականում ձևակերպված են ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցերին համապատասխան: Թերևս վերանայման կարիք ունեն «11005 - Սոցիալական շտապ օգնություն» և «12011 - ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր» միջոցառումները, որոնց վերնագրերը պատկերացում չեն տալիս միջոցառման շրջանակներում պետության միջամտության ձևի վերաբերյալ:

«11007-Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման նկարագրությունը ընդարձակ է, այն բյուջում ներկայացված է բառերի կրճատումներով, իսկ «11005 - Սոցիալական շտապ օգնություն» միջոցառմանը՝ չափազանց հակիրճ և ընդհանրական:

Միջոցառում	**ԲԳԿ/Ծրագրի /միջոցառման անվանումը**	**Կշիռը ծրագրում%**	**Գումար**
1011 - 11001	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում	0.48	111,762.0
1011 - 11003	Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում	0.34	78,750.0
1011 - 11005	Սոցիալական շտապ օգնություն	0.12	27,059.5
1011 - 11007	Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում	0.24	55,441.0
1011 - 11008	Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում	0.15	34,767.6
1011 - 11009	Անօթևան անձանց կացարանով ապահովում	0.30	70,762.4

1011 - 11010	Սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում	0.39	92,190.0
1011 - 12001	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ	97.20	22,754,921.0
1011 - 12007	Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում	0.09	21,600.0
1011 - 12008	Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին դրամական աջակցություն	0.12	27,900.0
1011 - 12009	Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին բնակելի տարածության վարձավճարի հատուցում:	0.16	37,200.0
1011 - 12010	ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում	0.06	13,680.0
1011 - 12011	ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր	0.04	10,080.0
1011 - 32001	Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգում	0.32	74,821.6
		Ընդամենը	**23,410,935.1**

Աղյուսակ 2. «1011- Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի ֆինանսավորումն ըստ միջոցառումների

1011 բյուջետային ծրագրի հատկացումները հիմնականում ուղղված են անապահով և կյանքի դժվարին իրավիճակում գտնվող սոցիալական խմբերի աջակցությանը: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է շուրջ **23.4 մլն դրամ,** որի ավելի քան **97 տոկոսը**, ուղղվում է ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներին: Այսինքն՝ գրեթե ամբողջ ծավալը կենտրոնացած է մեկ հիմնական՝ «1011-12001 - **Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ»** միջոցառման վրա՝ սոցիալապես անապահով ընտանիքներին ուղղակի դրամական աջակցություն տրամադրելու միջոցով: Ծրագրի մյուս բաղադրիչները համեմատաբար փոքր ծավալներ ունեն: Օրինակ, ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն

ուղղված նպաստների իրականացման ապահովման համար հատկացվում է մոտ **112 հազար դրամ՝** ծրագրի բյուջեի 0.5%-ը**,** սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում՝ **92 հազար դրամ (**կամ՝ 0.5%-ը**),** սոցիալական դեպքերի վարումը ապահովելու համար**՝ 79 հազար դրամ (**կամ՝ 0.4%-ը**),** սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգման համար՝ **75 հազար դրամ** (կամ՝ 0.32%-ը**)**, սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում միջոցառմանը հատկացվել է՝ **55 հազար դրամ** (կամ՝ 0.25%-ը**):**

Սոցիալական աջակցության ծրագրի մոնիթորինգը նախատեսվում է իրականացնել «1011- Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի 11007-«Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում», 12007- «Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում» և 32001- «Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգում» միջոցառումների նկատմամբ:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով սույն վերլուծության արդյունքները կարելի եզրակացնել, որ սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեն, լինելով պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը, աճման միտում ունի:

Ընտրված սոցիալական աջակցության թիրախային ուղղության 2025թ. բյուջեն հիմնականում համահունչ է ՀՀ ՖՆ մեթոդական ուղեցույցների պահանջներին, սակայն առանձին գործընթացներ հնարավոր է բարելավել:

1. Ծրագրերի անվանումների և նկարագրությունների համապատասխանեցում

- **Խնդիր.** Առանձին բյուջետային ծրագրերի և ծրագրերի միջոցառումների անվանումները չեն համապատասխանում ՀՀ ՖՆ մեթոդական ուղեցույցի պահանջներին:

  Առաջարկություն. Ծրագրերի և միջոցառումների անվանումները համապատասխանեցնել ՀՀ ՖՆ մեթոդական ուղեցույցի պահանջներին՝ հնարավորություն տալով ընդհանուր պատկերացում կազմել ծրագրի նպատակի կամ միջոցառման շրջաակներում պետության միջամտության ձևի վերաբերյալ, ձևակերպվեն ընկալելի և թափանցիկ:

- **Խնդիր.** Առանձին բյուջետային ծրագրերի միջոցառումների նկարագրությունները չեն համապատասխանում ՀՀ ՖՆ մեթոդական ուղեցույցի պահանջներին՝ շատ ընդարձակ են կամ շատ հակիրճ և ընդհանրական:

Առաջարկություն. Ծրագրերի միջոցառումների նկարագրություններն անհրաժեշտ է ձևակերպել հակիրճ, ներկայացնելով պետության կողմից իրականացվող միջամտության առանձնահատկությունները, հստակեցնի միջոցառման շրջանակը, իսկ առանձին դեպքերում պարունակի նաև հղումներ՝ պետության պարտադիր պարտավորություններին:

2. Ցուցանիշների համակարգի կատարելագործում

Խնդիր. Ուղղակի արդյունքի չափորոշիչների 91%-ը քանակական ցուցանիշներ են, որոնք թույլ չեն տալիս գնահատել միջոցառումների իրականացման որակը և արդյունավետությունը:

Առաջարկություն. Մշակել և ներդնել միջոցառումների ուղղակի արդյունքի որակական ցուցանիշներ՝ շահառուների գոհունակության, ծառայությունների մատչելիության վերաբերյալ:

This methodology has been developed with the financial support of the European Union, within the framework of a sub-grant provided under the "Budgets for Citizens" project implemented by a consortium led by the "Armenian Lawyers' Association" NGO.

It has been implemented by "Business and Education Association" PO within the framework of the "Monitoring and analysis of the social assistance sector budget" project.

The "Business and Education Association" PO is responsible for the content, and it does not necessarily reflect the views of the European Union.